

**ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΠΟΛΙΤΙΣΜΟΥ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ**

ΕΝΙΑΙΑ ΓΡΑΠΤΗ ΑΞΙΟΛΟΓΗΣΗ ΤΕΤΡΑΜΗΝΩΝ 2021-22

Α' ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ

ΗΜΕΡΟΜΗΝΙΑ 24.05.2022

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ (Α' ΣΕΙΡΑ)

ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Α012

ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ

**ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά
Ο ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΔΕΚΑΤΕΣΣΕΡΙΣ (14) ΣΕΛΙΔΕΣ**

1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ / 30 ՆԻԶ/

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ հատուածը եւ պատասխանեցէք հարցումներուն:

Երանիկ մօրաքոյրս լրիւ տարբեր էր իր քոյրերէն: Ան գրեթէ չէր մասնակցեր տան կեանքին: Ունէր իր առանձին սենեակը եւ գլխաշալ բանելու սովորութիւնը: Չէր սիրեր որ յանկարծակի խանգարէինք իր առանձնութիւնը:

Բայց մօրաքոյրս ունէր դեռ ուրիշ հրաշալիք մը՝ իր սնտուկը: Հոն պահած էր մանկութեան տարիներէն ձեռքը անցած իրերը. հնամաշ հնդկական շալեր, պարսկական մետաքսեղէններ, ոսկեթել շղարշներ եւ արծաթե պզտիկ բաժակներ եւ դեռ ինչեր:

Սերտ կապ մը կար իրեղէններուն եւ մօրաքրոջս պատմութիւններուն միջեւ: Ան միակն էր տան մէջ, որ կը խօսէր իր մեծ մօր մասին եւ այն գանձերուն մասին, որ հեռու ճամբորդութիւններէ բերած էր իր մեծ-հայրը՝ կարաւանապետ Շիրիւնը:

Իր սենեակին մէջ երբ <<քէֆը տեղն էր>>, մօրաքոյրս կը բանէր ու նոյն ատեն կ'երգէր կամ կը պատմէր: Իսկապէս, ան տաղանդ ունէր՝ պատմողի, իր մեծ հօրեղբօր՝ Ֆարհատին պէս, որուն մասին կը յիշէր մեծ խանդավառութեամբ:

Երանիկ մօրաքոյրս կը սիրէր նաեւ խօսիլ կարաւաններու ճամբորդութիւններուն մասին... Պատմած ատեն, իր դէմքը կ'այլափոխուէր, աչքերը կը վառէին յուզումէն ու խանդավառութենէն, կամ կը լեցուէին ժպիտով եւ արցունքով...

Երբեմն Երանիկ մօրաքոյրս ձեռքէս կը բռնէր եւ հետը դուրս կը հանէր – առանց ըսելու պտոյտին նպատակը: Մանկական յիշատակներուս մէջ, այդ պտոյտները մնացած են իբր երազային պահեր:

Բոլորը, բոլորը կը սիրէին Երանիկ մօրաքոյրս, մտերիմ կը զգային իրեն: Չեմ գիտեր՝ ի՞նչ կ'ըսէր, ինչպէ՛ս կ'ըսէր, բայց կը զգայի, որ կը ցրուէր բոլոր հոգերը. իր խօսակից կիները կը խանդավառուէին, երբեմն լիաթոք կը խնդային. մինչ ինք՝ կը մնար անայլայլ: Ես կը սիրէի, որ անցած ատեն՝ այսպէս ուրախութիւն, հաճոյք եւ ծիծաղ սերմանէինք մեր ճամբուն վրայ:

Զապէլ Եսայեան <<ՍիլիհտարիՊարտէզները>>

Ա – Հեղինակին մօրաքոյրը կը մասնակցե՞ր տան կեանքին:

Ի՞նչ գործով կը զբաղէր ան: / 5 նիշ/

1

Ա -Ան գրեթէ չէր մասնակցեր տան կեանքին:

-Չէր սիրեր յանկարծակի խանգարուէր իր առանձնութիւնը:

-Կը զբաղէր գլխաշալ պատրաստելով:

/3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Բ – Հեղինակին մանկական յիշողութեան մէջ իր մօրաքոյրը ինչպէ՞ս կը ստեղծէր կապը իրենց ընտանիքին անցեալին հետ: Յիշեցէք իր կատարածներէն ու վերաբերմունքէն 3 փաստ՝ ձեր խօսքը հաստատելու համար: / 5 նիշ/

Բ - Կապը կը ստեղծէր իր պատմութիւններով:

- Կը խօսէր իր մեծ-մօր ու մեծ-հօր մասին:
- Ան կը բանէր եւ նոյն ատեն կ'երգէր ու կը պատմէր:
- Կը խօսէր կարաւաններու ճամբորդութիւններու մասին:
- Աչքերը կը վառէին յուզումէն ու խանդավառութենէն կամ կը լեցուէին ժպիտով ու արցունքով:

/3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ – Երանիկ մօրաքրոջ ո՞ր բացառիկ յատկութիւնը մեծ արժէք ունէր հեղինակին համար: Ձեր խօսքը հաստատելու համար յիշեցէք հատուածէն 3 տարբեր նախադասութիւններ, որոնք կը հաստատեն այդ յատկութիւնը: / 60 բառի շուրջ/ / 8 նիշ/

Գ - Անմիջական հաղորդակցությունը

- Պտոյտները երազային պահերու վերածելը

Նախադասություններ`

- Բոլորը կը սիրէին զինք:
- Մտերիմ կը զգային իրեն:
- Կը ցրուէր բոլոր հոգերը:
- Խօսակից կիները կը խանդավառուէին:
- Ուրախութիւն, հաճոյք եւ ծիծաղ կը սերմանէին:

/6 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ
արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր
ուղղագրական սխալի համար/

Դ – Լեզուական աշխատանք – բառագիտութիւն

Հետեւեալ նախադասություններուն մէջ ընդգծուած բառերուն
տեղ դրէք նոյն իմաստը ունեցող այլ բառ մը: / 3 նիշ/

. Մերտ կապ մը կար իրեղեններուն եւ մօրաքրոջ պատմութիւններուն միջեւ:

. Սեմերէն ու պատուհաններէն՝ մեծ պզտիկ պաղատագին ներս կը հրաւիրէին:

. Ան կը զուարճացներ, կ'ամոքէր դրացիները:

Դ - Ապրանքներու

- Աղաչագին

- Կը մխիթարէր

/Ճիշդ հոմանիշ մը եթէ ուղղագրական սխալ ունի պիտի պակսի 0.25 նիշ/

Ե – Ընտրեցէք ճիշդ բառը սիւնակէն եւ դրէք յարմար նախադասութեան մէջ: /9 նիշ/

| | |
|--------------|--|
| Տիպարներու | <<Գիքորը>> պատմութիւնն է գիւղացի մանչուկի մը, որ քաղաք կը տարուի իբր ծառայ: Գիւղացի հօր աղքատութիւնն ու -----, միացած քաղաքացի |
| Դասակարգ | <<Վարպէտին>> -----, պատմութիւնը պիտի հասցնեն տխուր ----- մը: |
| Տգիտութիւնը | Գիւղացի ----- վարմունքին մէջէն՝ կը ներկայացուին գիւղական աշխարհն ու գիւղի մարդոց հոգին. ապա՝ քաղաքացի որոշ ----- մը, որ հարստացած է ----- մարդոց մեծամասնութեան խեղճութիւնը: Վերջապէս արագ ----- կը տրուին նաեւ քաղաքի կեանքը: ----- |
| Գծանկարով | ընդհանուր այս խնդիրին մէկ երեսն ալ գիւղացիութեան ----- է դէպի մեծ քաղաքները: |
| Ընկերային | |
| Անխղճութեան | |
| Շահագործելով | |
| Գաղթն | |
| Վախճանի | |

Ե – Տգիտութեան

Անխղճութեան

Վախճանի

Տիպարներու
Դասակարգ
Շահագործելով
Գծանկարով
Ընկերային
Գաղթն

/Ճիշդ ընտրուած բառը եթէ ունենայ ուղղագրական սխալ պիտի պակսի 0.25 նիշ/

2 – ՆԻԻԹԻ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

/30 Ն իշ/

Ուշադրութեամբ կարդալէ ետք հատուածը պատասխանեցէք հարցումները:

Համբօն Գիքորին ծառայ տուաւ Արտեմ աղայի տունը: Պայմանն էն էր, որ Գիքորը պէտք է տունը մաքրէր, ամանները լուանար, ոտնամանները սրբէր, խանութը բաժին տանէր, ու էս տեսակ մանր ծառայութիւններ, մինչեւ մի տարի: Մի տարուց յետոյ, աղան պիտի տանէր խանութ, շինէր խանութի <<աշկերտ>>, ու էսպէս Գիքորը պէտք էր <<բարձրանար>>:

- Հինգ տարի դեռ փող չեմ տայ,-ասաւ վարպետը պայմանը կապելիս : - Թէ ճիշդը կ'ուզես, դեռ դու' պետք է տաս, որ քո որդին բան է սովորելու: Ախր բան չգիտի. . .
- Որդեղից գիտենայ, աղա ջան,- պատասխանեց Համբօն,- որ գիտենար՝ էլ ու՞ր կը բերէի. Ես էլ բերել եմ, որ բան սովորի. . .
- Կը սովորի, ամէն բան կը սովորի: Էնպէս սովորի ո՛ր...Ձեր կողմերից Նիկօն, որ իրեն համար խանութ ունի բաց արած, նա ինձ մօտ է մարդ դառել: Բայց վերջում մի քանի կտոր գդալ գողացաւ...
- Չէ՛, աղա, սա գողանալ չի սովորել: Որ անի, կը գամ կը տանեմ՝ Քուռը կը գցեմ:
- Հա՛, որ ձեռը հալալ է մարդ կը դառնայ:
- Իմ հոգն էլ էն է , աղա, որ մարդ դառնայ, լեզու սովորի, գրիլ-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարքումն ինձ նման խեղճ ու գուրկ չմնայ...Ինքն էլ աչքաբաց երեխայ է, գեղական դպրոցում էլ գրաճանաչ է էլել, գրի սեն ու սպիտակը ջոկում է: Ամա խնդիրքս էն է, որ լաւ մտիկ անէք, պանդուխտ երեխայ է...

Յովհաննէս Թումանեան <<Գիքոր>>

Ա- Գիքորը աշխատանքի ընթացքին ի՞նչ պարտականութիւններ պիտի ունենար: Ինչո՞ւ չակերտի մէջ գրուած է <<բարձրանար>>: / 6 նիշ/

2 Ա – Տան մաքրութիւն

- Պնակները լուալ
- Ոտնամանները սրբել
- Խանութը ուտելիք տանիլ
- Խանութի աշակերտ դառնալը երկար տարիներու առանց վարձատրութեան որեւէ բարձրացում չէր կրնար նշանակել: Ուղղակի իմաստով գործածուած չէ:

/4 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար /

Բ- Համբօն ի՞նչ մտահոգութեամբ տարած էր զաւակը քաղաք: Ի՞նչ ակնկալութիւն ուներ: /6 նիշ/

- Բ - Մարդ դառնայ
- Լեզու սորվի
- Գրել կարդալ սորվի
- Վարուելակերպ ունենայ
- Մարդ ճանչնայ

/4 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ- Ձեր կարծիքով ի՞նչ զգացումներ ունեի Գիքոր իր նոր իրավիճակին մեջ: Բացատրեցե՞ք ինչո՞ւ: / 6 նիշ/

Գ- Կարօտ

- Տիրուրթին

- Չարմանք

- Վախ

- Յոյս

- Ծննդավայրեն եւ հարազատ միջավայրեն հեռացումը ու նոր միջավայրի անձանօթ իրականությունները ստեղծած էին վերոյիշեալ զգացումները:

/4 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Դ- Դուք <<Գիքոր>> պատմուածքը կարդալու կողքին շարժապատկերն ալ դիտեցիք: Ի՞նչ կարելոր խնդիրներ կը ներկայացնէ հեղինակը՝ Յովհաննէս Թումանեան այս գործով, որոնք այսօր ալ շատ տասնամեակներ ետք, կը գրաւեն մեր ուշադրութիւնը: /60 բառի շուրջ/ / 9 նիշ/

Դ-Գիւղը եւ գիւղացիներու կեանքը

- Քաղաքը իր սովորութիւններով
- Դպրոցէ գրկուած երեխաները
- Փոքր տարիքէն աշխատանքի պարտադրանքը
- Գիւղի եւ քաղաքի տարբերութիւնները
- Գիւղէն գաղթը քաղաք
- Տարբեր դասակարգերը
- Մարդոց շահագործումը

/6 նիշ բովանդակութիւն 3 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25/ նիշ պիտի պակսի իւրաքանչիւր սխալի համար/

Ե- Հետեւեալ նախադասութիւններուն ընդգծուած բայերը գրեցէք **Անցեալ Կատարեալ** ժամանակով: / 3 նիշ/

. Գրագէտը կը զգացնէ թէ գիւղացիութեան արտագաղթը աղէտ է:

. Ան կը գբաղի մարդասիրական գործունէութեամբ:

. Կը գրէ գիւղէն չհեռանալու անոր փափաքին մասին:

Ե- Զգացուց

-Զբաղեցաւ

-Գրեց

/Ճիշդ ժամանակով, դէմքով ու թիւով գրելու բայց ուղղագրական սխալ կատարելու պարագային պիտի պակսի 0.25 նիշ իւրաքանչիւր բառէ/

3 – ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ / 40 Նիշ/

Ա- << Մեր լեզուն մեր հոգիին կանչն է արդար. մեր լեզուն մենք ենք...>>

Գրեցէք որպէս աշակերտ ձեր մտածումները եւ զգացումները մայրենի լեզուի մասին: Ին՞չ գանձեր ունի մայրենի լեզուն եւ ինչպէ՞ս հաղորդակից դառնալ: Ինչո՞ւ կարեւոր է աշակերտներ շատ լաւ սորվին իրենց մայրենի լեզուն:

/140 բառ/ / 20 նիշ/

Բ – Աշակերտական թերթի մը մէջ պիտի ներկայացուին
աշխարհի տարբեր երկիրներէ սիրուած փողոցներ:
Դուք ալ գրեցէք ձեր սիրած փողոցին մասին: Ի՞նչ
պատճառներով յիշատակելի է այն ձեզի համար:
/140 բառ/ /20 նիշ/

3 – ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա ԵՒ Բ

Իւրաքանչիւր նիւթով կ'ակնկալուի զարգացնել իրենց
մտածումները ու զգացումները:

/Իւրաքանչիւր նիւթ 20 նիշ հերեւեալ բաժանումով՝ 6 նիշ
բովանդակութիւն 5 նիշ կառուցուածք
6 նիշ արտայայտութիւն 3 նիշ ուղղագրութիւն,
իւրաքանչիւր 5 ուղղագրական սխալի համար պիտի
պակսի 1 նիշ/

Ուշադրութիւն դարձուցէք ուղղագրութեան եւ ձեռագիրի
մաքրութեան:

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ